ՍԷՅՐԱՆ ՍԱՐԳԱՒԱԳ ՂԱՋԱՐԵԱՆ

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Մեծացուսցէների բովանդակային ակունքները

«Հոգեւոր երգը ստեղծուած լինելով եկեղեցու պէտքի համար՝ ամենից առաջ եղել է մի յարմար միջոց ժողովրդի մէջ բարեպաշտութիւն զօրացնելու եւ քրիստոնէական ուսումը տարածելու: Դա մի կողմից, ուրեմն, օրհներգութիւն է, միւս կողմից դիտակտիկական, ուսուցական բանաստեղծութիւն»[1],- գրում է ականաւոր հայագէտ Մանուկ Աբեղեանը: Կանոնի այլ միաւորների (օրհնութիւն, հարց եւ այլն) նման մեծացուսցէները եւս բիւում են Եկեղեցու աստուածապաշտական կեանքի իրողութիւններից եւ ծառայում որոշակի նպատակի: «Բացի Աւետարանի պատմութեան ուսումից՝ հոգեւոր երգը յաճախ միաժամանակ ծառայել է ժողովրդին նաեւ դաւանաբանական ուսում տալու»[2],- մէկ այլ տեղ ասում է Աբեղեանը:

Ուրեմն, մեծացուսցէներն առաջին հերթին ընդհանրական աղօթքի մի տեսակ են, Տիրամօրը նուիրուած օրհներգութիւններ ու բարեխօսական տարբեր պարունակող երգեր: Այս շարականների բովանդակութիւնն ի տարբերութիւն օրինակ, օրհնութեան շարականների, չափազանց կաղապարուած ու միօրինակ է: Քանի որ եթէ օրհնութեան շարականների նպատակն է հաւատացեալների համար բացայայտել օրուայ խորհուրդը, ապա մեծացուսցէների հիմնական առանցքը Սուրբ Կոյսին եւ նրանից ծնուած Փրկչին «մեծացուցանելն» է:

Գրեթէ բոլոր մեծացուսցէները զերծ են դիպաշարային յօրինուածքից. երբեմն կարող ենք հանդիպել մէկ նախադասութեամբ սահմանափակուող դիպաշարային միաւորի: Օրինակ՝ *«Աւետաւոր հրեշտակն աւետարանէր զծնեալ Փրկիչն ի սրբոյ կուսէն»*[3]: Մնացած բոլոր դէպքերում դիպաշարային գիծը գրեթէ բացակայում է: Գոյութիւն ունի Տիրամօրը փառաբանելու համընդհանուր սկզբունք, որը տարածւում է մեծացուսցէ շարականների մեծամասնութեան վրայ եւ որի իրագործումով մեծացուսցէները ձեռք են բերել այն բովանդակային գծերը, որոնց մասին կփորձենք առաւել մանրամասն խօսել ստորեւ:

Սակայն մինչ այդ մի փոքր ակնարկով փորձենք քննել այն ատաղձը, որի հիման վրայ ստեղծուել են հայ երաժշտաբանաստեղծական արուեստի այս գոհարները եւ փորձենք պատասխանել այն հարցին, թէ որոնք են այս շարականների բովանդակային ակունքները:

Մեծացուսցէ շարականների ստեղծաբանական հիմքերն այնքան էլ բազմազան չեն. նախ՝ անհերքելի է, որ հոգեւոր երգերն իրենց նիւթն առնում են Աստուածաշնչից, յաճախ բառացիօրէն կրկնում այս կամ այն նախադասութիւնը: Այս իմաստով բաւական մեծ է հինկտակարանեան բաժինը: Առաջինը, որ բաւական ցայտուն արտայայտուած է, սաղմոսներն են: Օրինակ Սուրբ Կոյս Մարիամի ծննդեան կանոնի մեծացուսցէի երրորդ տան մէջ ասում է.

1 **Մ. Աբեղյան**, Ուրուագծեր հայոց գրականութեան պատմութիւնից, «Արարատ», 1912, էջ 1002 (այսուհետ՝ **Մ. Աբեղյան**, Ուրվագծեր):

2 **Մ. Աբեղյան**, Երկեր, հատ. Գ, Երեւ. 1986, էջ 549:

3 Տե՛ս «Շարական հոգեւոր երգոց Սուրբ եւ Ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց», Ս. Էջմիածին, 1861, էջ 26 (այսուհետ՝ «Շարական»,):

«... զկարօտեալսն ելից հացիս...»[4]: Այս միտքն է շօշափում 145-րդ սաղմոսի 7-րդ համարը. «փայ հաց քաղցելոց...»[5]: Կարելի է բերել բազմաթիւ նմանատիպ օրինակներ, որոնցում շարականագիրը գրեթէ նոյնութեամբ օգտագործել է այս կամ այն սաղմոսը:

Երկրորդը մարգարէական հատուածներն են կամ մարգարէութիւնների վերաբերեալ ակնարկները: Օրինակ՝ Ծննդեան հինգերորդ օրուայ կանոնի ճաշու միաւորի տակ զետեղուած մեծացուցէում ասում է.

Անթառամ ծաղիկ անդադրապարտ շառաւիղ, վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ. զքեզ Եսայիաս կանխաւ վերագոչեաց եօթնարփեան շնորհաց հոգւոյն ընդունարան գոյ...[6]*:*

Հայր Գաբրիէլ Աւետիքեանը, իր «Բացատրութիւն շարականաց» գրքում անդրադառնալով այս շարականի *«անդադրապարտ շառաւիղ»* արտայայտութեանը, գրում է, որ Եսայից ծնուածներից միայն Սուրբ Կոյսն էր, որ առանց մեղքի դատապարտութեան եւ անէծքի շառաւիղ տալով աճեց[7]: Ակներեւ է, որ Եսայու մարգարէութեան ԺԱ գլխի բացումը շարժառիթ է հանդիսացել այս շարականի ստեղծման համար. «Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ, եւ ելցէ ծաղիկ յարմատոյն անտի» (Եսայի ԺԱ:1):

Շարականական բազմաթիւ կտորներ ունեն ուղղակի նորկտակարանեան ակունքներ: Դրանցից առաջինն ու ամենաշատ աչքի զարնողը հէնց Մարիամի երգն է, որի մասին արդէն խօսեցինք առաջաբանում: Չմոռանանք, որ մեծացուցէ շարականները սկզբնաւորուել են աւետարանական «Մեծացուցէ անձն իմ զՏէր...» արտայայտութեան հենքի վրայ:

Մեծացուցէներում նկարագրւում են նորկտակարանային բազում դէպքեր, որոնք երբեմն հիւսուած են այնքան պարզ, որ թւում է, թէ շարականագիրը բնաւ ջանք չի թափել դրանք ստեղծելիս: Օրինակ՝ Աստուածայայտնութեան ճրագալոյցի մեծացուցէի երրորդ տունը.

Տեսանեմք զսուսկալի գիրաշալի խորհուրդ յայտնեալ. ի Յոգւոյն Սրբոյ յղացեալ, զԲանն Աստուած մարմնով ծնաւ, ազգ եւ ազինք զքեզ մեծացուցանեմք[8]*:*

Մեծացուցէներում իրենց տեղն ունեն Սրբազան Աւանդութեանն ու Եկեղեցու հայրերի զանազան ուսուցումների արձագանքները: Օրինակ՝ Վերափոխման կանոնի մեծացուցէի երրորդ տան բովանդակութիւնն ամբողջութեամբ խարսխուած է Սրբազան Աւանդութեան վրայ.

Տեղափոխեալ զքեզ ի վերնական ի կառս քերովբէականս Աստուածամայր. սպասաւորեալդ ի սերովբէից եւ երկրպագեալդ յանմարմնական զօրաց[9]*:*

Բաւական թուով տեղիներ արտայայտում են Եկեղեցու այս կամ այն հրամանակարգ վարդապետութիւնը եւ այլն:

---

4 Տե՛ս «Շարական», էջ 4:

5 Աստուածաշնչային այս եւ հետագայ մեջբերումներն ըստ՝ «Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց», Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Երեւ., 1997:

6 Տե՛ս «Շարական», էջ 41-42:

7 Հմմտ.՝ «Բացատրութիւն շարականաց, որք պաշտին ի հասարակաց ժամանակարգութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, աշխատասիրեալ Տեառն Գաբրիելի Աւետիքեան», Վենետիկ, 1814, էջ 83, (այսուհետ՝ «Բացատրություն շարականաց»):

8 Տե՛ս «Շարական», էջ 20:

9 Անդ, էջ 469:

Մեծացուսցէ շարականների բովանդակութիւնը

Քիչ թէ շատ մօտենալով մեծացուսցէ շարականների բովանդակային ակունքներին, այժմ մենք հեշտութեամբ կարող ենք ուսումնասիրել շարականների բովանդակային համայնապատկերը, կարծիք կազմել նրանց գեղարուեստական արժանիքների վերաբերեալ: Մեծացուսցէների մեծամասնութիւնը նուիրուած է Տիրամօրը, իսկ շուրջ հինգ շարականներ նուիրուած են Քրիստոսին: Կան նաեւ փոքրիկ բացառութիւններ, որոնցում գովերգւում են թէ՛ Աստուածամայրը եւ թէ՛ Քրիստոս: Մէկ երգ նուիրուած է Սուրբ Երրորդութեանը, իսկ Պենտեկոստէի կանոնի մեծացուսցէն ամբողջութեամբ ձոնուած է Սուրբ Հոգուն: Տիրամօրը նուիրուած շարականներում, որպէս կանոն, մենք հանդիպում ենք բովանդակային մի քանի շերտերի: Առաջինը եւ ամենագլխաւորը, Սուրբ Կոյսին նուիրուած փառաբանական, օրհնաբանական բանաձեւերն են, որոնք հիմնականում ի յայտ են եկել դարձերի տեսքով: Երկրորդն այն բազմաթիւ տեղիներն են, որոնցում Տիրամայրը հանդէս է գալիս իբրեւ բացառիկ մի կերպար, որի շնորհիւ այլեւս իրականանում է ադամորդու փրկութիւնը: Աստուածամօրը նուիրուած մեծացուսցէների մէջ հէնց այս կէտում է, որ Սուրբ Կոյսը հանդէս է գալիս որպէս բարձրագոյն սկզբունք եւ կատարելատիպ: Այստեղ է, որ բացայայտւում են միմիայն Տիրամօրը վերապահուած մի քանի բացառիկ գործառոյթներ: Այսպիսով, մեծացուսցէ շարականներում գեղարուեստական լեզուով մեզ են վերաներկայանում Աստուածամօր անարատ ու անսերմն յղութեան[10], հաւիտենական կուսութեան[11] Եկեղեցու հրամանակարգ վարդապետութիւնները, որտեղ իշխում է Սրբազան Աւանդութեան կողմից նրան վերապահուած բացառիկ դիրքի տիրական թեման. Աստուածամայրը սրբերի գլուխն է, աստուածային նուիրապետութեան մէջ նա ստորադասուած է միայն Ամենասուրբ Երրորդութեանը:

Այս շարականները պարունակում են բազմաթիւ տեղիներ, որոնցում շեշտւում է հայրաբանական այն միտքը, թէ Տիրամայրը նորոգեց անկում ապրած նախամօր՝ Եւայի կերպարը: Մեծացուսցէ շարականներում նոյն միտքը՝ Քրիստոս-Ադամ յարաբերութեամբ եւս բազմաթիւ անգամներ շոշափւում է:

Մեծացուսցէները առլեցուն են Տիրամօրը գովերգող մակդիրներով, մակդիրաւոր արտայայտութիւններով ու շրջասութիւններով, ինչպէս նաեւ՝ աստուածաշնչային դրուագների փոքրիկ նկարագրական հատուածներով եւ այլն:

Ուրեմն, ինչպէս վերը նշեցինք, մեծացուսցէ շարականները պարունակում են բազմաթիւ տեղիներ, որոնցում շեշտուած է Տիրամօր բացառիկութեան հանգամանքը: Այսպիսով՝ Սուրբ Աստուածածնի Աւետման կանոնի մեծացուսցէն[12] սկսւում է *«Ուրախ լեր»* արտայայտութեամբ, որը հէնց սկզբից աւետման զուարթ տրամադրութիւն է հաղորդում ունկնդրին (կամ ընթերցողին): Առաջին տունը բաւական առարկայական կերպով նկարագրում է Սուրբ Մարիամի ուրախութեան առիթը (յանկարծակի եկն Տէր): Իսկ երկրորդ եւ երրորդ տներն աւելի այլաբանական բնոյթի են: Շարականագիրն օգտագործելով հինկտակարանեան այլաբանական պատկերներ՝ (*«դուռն փակեալ», «աղբիւր կնքեալ»*)՝ մատնանշում է Աստո-

10 Մարիամի անարատ յղությունը (inefabilis Deus) Կաթոլիկ եկեղեցու դոգմաներից է՝ սահմանուած 1854թ. դեկտեմբերի 8-ին Պիոս պապի կողմից (www.Wikipedia.org/wiki/immacual/conseption):

11 Մարիամի կուսութիւնը դոգմա է՝ արտայայտուած 553թ. Կ.Պոլսի երկրորդ, 1215թ. Լաթերանի չորրորդ եւ 1274թ. Լիոնի երկրորդ ժողովներում (www.cssr.net/repchret/fransez,volium 2/vierge/vierge-mari02.htm):

12 Տե՛ս «Շարական», էջ 15:

ուածամօր կուսութեան եւ անարատ յղութեան վերաբերեալ եկեղեցու վարդապետութիւնը *(Դուռն փակեալ ընդ որ ոչ ոք մտցեալ, բայց Տէր Աստուած Իսրայէլի)*: Հայր Գաբրիէլ Աւետիքեանն այս շարականի բացատրութեան առիթով ասում է, որ *«դուռն փակեալ»*-ն ակնարկում է կուսական ծնունդը, որովհետեւ Տիրամօր արգանդը փակուած էր մարդկային զաւակի համար *«անխախտելի ուխտիւ»*, մինչեւ հրեշտակի աւետումը: Նոյն այլաբանական պատկերն իր «Աստուածածնի գովեստ» երկում կիրառել է նաեւ Զ դարի հեղինակ Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսը. «Ուրա՛խ լեր, Մարիամ, Դուռն աղխեալ, ընդ որ հրեշտակաց Տէրն մո՛ւտ եւ ե՛լ, եւ զկուսական արգանդդ ոչ ելոյծ, յաղագս որոյ Եզեկիէլ մարգարեացաւ, թէ Դուռնն որ յարեւելս կոյս է՝ ոչ ոք մտցէ ընդ նա եւ ելցէ, բայց Տէր Աստուած Իսրայէլի մտցէ եւ ելցէ, եւ դուռն փակեալ կայցէ»[13]:

Իսկ *«աղբիւր կնքեալ»*-ը Երգ Երգոցի Դ գլխի 12-րդ համարից է վերցուած եւ բացատրութիւնը հետեւեալն է. թագաւորական աղբիւրները կնքւում էին, որպէսզի բոլորի համար մատչելի չլինեն[14]:

Նոյն կանոնի ճաշու միաւորի տակ զետեղուած մեծացուցէի առաջին տունը եւս Տիրամօր բացառիկութիւնն է շեշտում. *«որ եղեր արեւելք արեգականն արդարութեան եւ նստեցելոցս ի խաւարի լոյս ծագեցեր»*[15]: Ասել է թէ՝ որեւէ վայրով չսահմանափակուող արդարութեան արեգակի՝ Քրիստոսի համար Սուրբ Կոյսն արեւելք եղաւ, այսինքն՝ մայր: Այս շարականի երկրորդ տունն աչքի է ընկնում գեղարուեստական շքեղ բառապատկերներով եւ միեւնոյն ժամանակ ոճի մեղմութեամբ ու հանդարտութեամբ: Այստեղ եւս Սուրբ Կոյսը գովերգւում է յղութեան համար.

Անապական պաճար եւ մորենի անկիզելի որ զանշէջ հուր աստուածութեանն ի քեզ պարեալ կրեցեր, որով բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք:

Մէկ այլ տեղ երգիչը Տիրամօրը համեմատում է Անկիզելի մորենու հետ[16]. *«որ զհուրն Աստուած յորովայնի քում կրեցեր անկիզելի մորենի»*[17] եւ ապա շարունակում. *«Որ զանշօշափելին էից ի գիրկս քո բարձեալ դիեցուցեր կաթնասուն»*,- այսինքն՝ «դու, որ արարածներից անշօշոփելին գիրկդ առնելով քո կաթով սնուցեցիր»[18]: Մօր ու մանկան այս սրբազան ու խորախորհուրդ յարաբերութեան նկարագրութեան մէջ Աստուածամայրն հանդէս է գալիս իբրեւ մի սովորական սրնտրու մայր՝ զերծ աստուածաբանական սիմվոլիկայից ու եզրաբանութիւնից: Սա եզակի հանգամանք է մեծացուցէ շարականներում, քանի որ մեծացուցէներում Տիրամօր կերպարն օժտուած է աւելի շատ գերբնական, քան թէ բնական

---

13 **Գալուստ Տէր-Մկրտչեան,** Հայագիտական ուսումնասիրութիւններ, գիրք Բ, աշխատ. պրոֆ. Պ. Հ. Յակոբեանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 179 (այսուհետ՝ «Հայագիտական ուսումնասիրութիւններ»):

14 Հմմտ. «Բացատրություն շարականաց», էջ 37:

15 Տե՛ս «Շարական», էջ 17:

16 Ծննդոց, Գ:2:

17 Տե՛ս «Շարական», Մեծացուցէք Յարութեան Տեառն, էջ 56:

18 Տիրամօր՝ իբրեւ սրնտրու մօր թեման իրայատուկ մեկնաբանութիւններով շօշափել են նաեւ Սուրբ Գրիգոր Նարեկացին, Միսաք Մեծարենցը եւ այլք (հմմտ.՝«Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատեան ողբերգութեան», Եր., 2003, Բան Զ, էջ 486-487, **Մ. Մեծարենց**, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1981, էջ 96-97): Սոյն թեման լայնօրէն տարածուած է եղել ոչ միայն պոէզիայում, այլեւ գեղանկարչութեան մէջ. ամենանշանաւոր գործը թերեւս Վերածնունդի հանճարեղ նկարիչ Լեոնարդո դա Վինչիի՝ Էրմիտաժում պահուող «Լիտրայի Տիրամայր»-ն է:

յատկանիշներով, եւ այս կերպարի գրականացումը պայմանաւորուած է աստուածաբանական եզրաբանութեամբ եւ դաւանաբանութեան շեշտադրումով: Իսկ հայ գրականութեան մէջ Տիրամօր՝ իբրեւ իրական կերպար հանդէս գալու առաջին նմոյշները գտնում ենք Սուրբ Գրիգոր Նարեկացու տաղերում[19]:

Նոյն թեման արծարծւում է նաեւ հետեւեալ շարականի մէջ՝ այս անգամ շեշտադրելով Աստուածամօրը վերապահուած բացառիկ դերը՝ նրան համեմատելով հրեշտակների հետ.

Յորմէ զարհուրեալ դողային դասք վերին զուարթնոցն, պղայապէս առընկալեալ բարձեր ի գիրկս. եւ արբուցեր որպէս մայր ստացողին զքեզ զկուսական քո սուրբ զկաթն[20]*:*

Սովորաբար Աստուածամօր բացառիկութիւնը շեշտելու համար շարականագիրն օգտագործում է չափազանց պարզ մի մեխանիզմ. Տիրամօրը տարբեր շարականներում համեմատելով մերթ հրեշտակների, մերթ առաքեալների եւ մերթ բովանդակ մարդկութեան հետ՝ զովաբանում է նրա միջոցով իրականացուած այս կամ այն երեւոյթը, ինչն ի զօրու չէին լինի անել վերոյիշեալ երեք դասերը: Օրինակ՝ հետեւեալ հատուածում Տիրամայրը համեմատւում է առաքեալների հետ.

Ի մասնաւոր լուսոյն զարհուրեցան դասք առաքելոցն. այլ ի քեզ բովանդակ կրեցեր զհուր աստուածութեանն Մարիամ, մայր եւ կոյս[21]*:*

Այս հատուածի մասին Հ. Գաբրիէլ Աւետիքեանն ասում է, թէ առաքեալները զարհուրեցին այլակերպութեան լոյսից, որն անկատար եւ նուազ լոյս էր, իսկ Մարիամը կրեց բովանդակ աստուածութեան հուրը եւ ապա աւելացնում է. «Այսքան մեծ անջրպետութիւն կայ ի մէջ աստուածածնի եւ առաքելոց»[22]:

Կարելի է բազմաթիւ օրինակներ յիշել եւ դարձեալ խօսել մեծացուցէներում Տիրամօր յղութեան գեղարուեստական կերպաւորման մասին: Սակայն մենք կսահմանափակուենք՝ բերելով եւս մէկ օրինակ, որն ըստ էութեան, նմանօրինակ գեղարուեստական կոնտէքստում բանաձեւային արժէք ունի: Այն, կարելի է ասել, իրենով ներկայացնում է մեծացուցէ շարականներում առկայ յղութեան վերաբերեալ գրեթէ բոլոր նկարագրութիւնների ամփոփումը.

Երիս խորհուրդս սոսկալիս ի քեզ տեսանի, Աստուածածին. յղութիւն անսերմնական, ծնունդ անապական, կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական[23]*:*

Իսկապէս այս երկու տողի մէջ կարծես ամփոփուած է Տիրամօր յղութեան վերաբերեալ մեզ յայտնի ամբողջ վարդապետութիւնը: Այստեղ մենք ականատես ենք լինում չափազանց հետաքրքրական մի երեւոյթի. յայտնի փաստ է, որ բիզանդական պատկերագրութեան մէջ Տիրամայրը յաճախ ներկայանում էր թիկնոցի վրայ պատկերուած երեք աստղերով, որոնք խորհրդանշում են Քրիստոսի ծննդից առաջ, ծննդեան պահին եւ ծնունդից յետոյ նրա անխախտ կուսութիւնը: Մեր միջնադարի վարդապետները եւս յաճախակի են օգտագործել աստղերի այս սիմվոլիկան: Օրինակ այդպիսի նկարներ կան («Աւետում», «Տիրամայ-

19 Այս իմաստով յատկանշական է «Մեղեդի ծննդեան» տաղը (տե՛ս **Գր. Նարեկացի**, Տաղեր եւ գանձեր, աշխատասիրությամբ Արմինէ Քէոշկերեանի, Երեւ., 1981, էջ 123-125:)

20 Տե՛ս «Շարական», Կանոն Ծննդեան երկրորդի աւուր, էջ 34:

21 Տե՛ս անդ, Կանոն Վարդավառին առաջնոյ աւուր, էջ 451-452:

22 Հմմտ. «Բացատրություն շարականաց», էջ 457:

23 Տե՛ս «Շարական», Մեծացուսցէք Յարութեան Տեառն, էջ 63:

րը մանկան հետ») Գրիգոր Տաթեւացու կողմից 1378թ. Տաթեւի վանքում նկարազարդուած աւետարանում (Մաշտոցի անւ. Մատենադարան, ձեռ. թիւ 7482)[24]: Երեւոյթն ինքնին խօսուն վկայութիւնն է այն իրողութեան, որ միջնադարում արուեստի ճիւղերը կրում էին եկեղեցական դաւանաբանութեան ազդեցութեան կնիքը:

Մեծացուցէներում գերիշխող է նաեւ Սուրբ Կոյսից Քրիստոսի ծննդեան թեման: Այն յաճախ յղութեան թեմայի հետ ընդելուզուած է հանդէս գալիս: Եւ ընդհանրապէս պիտի նկատի ունենանք, որ այս երեւոյթի հետ Շարակնոցում բաւական յաճախադէպ ենք առնչւում: Սակայն մեր նպատակն է դրանք առանձին-առանձին ներկայացնել, որպէսզի մեծացուցէ շարականների բովանդակային տարբեր շերտերի բացայայտումն աւելի դիւրին լինի:

Սուրբ Կոյսից Քրիստոսի ծննդեան նկարագրութիւնն այս քերթուածքներում դարձեալ մի նպատակ ունի. դրա միջոցով շեշտել Տիրամօր բացառիկութիւնն ու Աստծու մայր լինելու հանգամանքը: Նկարագրութիւններում Քրիստոս ներկայացուած է որպէս ծնուող *«զԲանն Աստուած»:* Երբեմն նպատակադրուած կերպով շեշտւում է մարմնով ծնուելու հանգամանքը.

Աստուածածին, տաճար լուսոյ, որ մարմնով պարագրեալ անճառաբար ծնար զԲանն Աստուած[25]*:*

Համաձայն մեր Եկեղեցու վարդապետութեան՝ «նա (Քրիստոս) միացրեց իր աստուածութիւնն իր մարդկութեան հետ անշփոթ եւ անբաժան միաւորութեամբ: Ըստ որում եւ իրաւամբ կոչում ենք նորան աստուածամարդ»[26]: Հետեւեալ օրինակներում նկարագրւում է մարդկային մարմնով Աստծոյ ծնունդը.

Անճառապայծառ բերկրեալ միշտ կոյս, որ զանբաւելի զԲանն անճառաբար յղացար, եւ զմարմնացեալն Աստուած ծնանելով ի քէն[27]*:*

Տեսանեմք զսոսկալի զհրաշալի խորհուրդ յայտնեալ. ի Յոգւոյն Սրբոյ յղացեալ. զԲանն Աստուած մարնով ծնար...[28]*:*

Իսկ այս դէպքում շարականագիրը շեշտում է Քրիստոսի՝ նաեւ մարդ լինելու հանգամանքը.

Հուրն կենդանի, որ ի մորենին վառեցաւ. զոր անվնաս յարգանդի քում կրեցեր եւ ծնար Աստուած եւ մարդ...[29]*:*

Այսպիսով տեսանք, որ Տիրամօր բացառիկ դերը մեծապէս արտայայտուած է յղութեան եւ ծննդեան նկարագրություններ պարունակող հատուածներում: Մեծացուցէներում բաւական յաճախադէպ արծարծուող թեմաներից է նախանիկիական հայրաբանական գրականութեան մէջ բաւական լայն կիրառութիւն գտած վերանորոգութեան-վերագլխութեան վարդապետութեան[30] գրականացումը: Համաձայն այդ վարդապետութեան՝ նախամարդիկ՝

24 Տե՛ս "The Armenian miniatures of the 13th and 14th centuries", Leningrad, 1984, նկար 24, 25:

25 Տե՛ս, «Շարական», կանոն Սրբոյ Զատկի, էջ 285:

26 **Ա. Տէր-Միքէլեան,** Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 168:

27 Տե՛ս «Շարական», կանոն Ծննդեան Քրիստոսի երկրորդի աւուր, էջ 29-30:

28 Տե՛ս անդ, կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին, էջ 20:

29 Տե՛ս անդ, կանոն Ծննդեան Քրիստոսի երրորդի աւուր, էջ 32:

30 Վերանորոգութիւն-վերագլխութիւն եզրն ըստ Սուրբ Իրինէոսի (177-202թթ. Լիոնի եպս.):

Ադամն ու Եւան, կապարեալին հասնելու ճանապարհից ընկրկեցին՝ անհնազանդութեամբ ճաշակելով մահուան պտուղը, դադարեցին այլեւս կապարեալ լինելուց եւ բռնեցին անկման ուղին: Սակայն Աստուած չէր կարող թոյլ տալ, որպէսզի իր պատկերն ու նմանութիւնը կրող մարդը կործանուէր, ուստի աշխարհ առաքեց իր Միածնին՝ Նոր Ադամին՝ քաւելու համար Հին Ադամի մեղքը, այլ խօսքով՝ վերանորոգելու կամ վերագլխելու նրան: Իսկ Սուրբ Մարիամ Աստուածածինն իր հնազանդութեամբ վերանորոգում - վերագլխում է Եւայի անհնազանդ կերպարը, այսպիսով դառնալով ողջ մարդկութեան փրկութեան պատճառը[31]:

Այս վարդապետութեան վերաբերեալ հատուածները հանդէս են գալիս երկու դարբերակով՝ հատուածներ, որոնցում արծարծում է Տիրամօր կողմից Եւայի վերագլխութեան վարդապետութիւնը եւ հատուածներ, որոնցում Քրիստոս է վերագլխում Ադամին:

Աղուհացից հինգերորդ կիրակի օրուայ մեծացուցէի երրորդ տունը Եւայի վերագլխութեան պահը ներկայացնում է այլաբանական կարգոյթներով.

Ծառ կենաց, որ զանմահութեան պտուղն ի քէն եդուր նախնւոյ մօրն Եւայի ի մահաբեր երկանցն ազատելով[32]:

Եւային վերագլխացող Տիրամայրը մեծացուցէներում անուանւում է *«բարձող անիծից»*[33], *«հնութեան կերպի նորոգող»*[34], *«բարձող պրպմութեան նախամօրն Եւայի»*[35] եւ այլն:

Ադամի վերագլխութեան պահի նկարագրութեան հատուած կայ Բուն Բարեկենդանի մեծացուցէում, որը հասցէագրուած է Տիրամօրը.

Որ առ ի քէն Երկրորդ Ադամ վասն առաջնոյն յանցանաց բնութեամբ մերով պահելով զմահաբեր պտղոյն լուծեալ զպատրանս[36]:

Եփրեմ արք. Թ-ապագեանն այս հատուածն արեւմտահայերէնի է թարգմանել հետեւեալ կերպ.

Քեզմէ ծնած երկրորդ Ադամը առաջինին յանցանքներուն համար մեր բնութեամբ պահք պահելով մահաբեր պտղին խաբէութիւնը ջնջեց[37]:

Քրիստոսի կողմից ողջ մարդկութեան վերագլխութեան թեման շեշտւում է նաեւ Սուրբ Աստուածածնի ծննդեան կանոնի մեծացուցէում եւ այլն:

Քրիստոսին նուիրուած մեծացուցէներ

Թ-ուով չորս մեծացուցէներ նուիրուած են ոչ թէ Աստուածամօրը, այլ Քրիստոսին: Այս շարականներում նկարագրւում են Քրիստոսի տնօրինական կեանքի տարբեր դրուագներ: Ինչպէս տեսանք, այս շարականներից մի քանիսը կրկնակ չունեն եւ ստեղծուած են բոլորովին այլ կաղապարով:

Քրիստոսին նուիրուած իւրայատուկ ստեղծագործութիւն է Ծաղկազարդի կանոնի մե-

31 Հմմտ. **Եղնիկ ծ. վրդ. Պետրոսյան**, Հայրաբանություն, Ա մաս, Ս. Էջմիածին, 1996, էջ 100-101:

32 Տե՛ս «Շարական», էջ 185:

33 Տե՛ս անդ, Մեծացուցէք Յարութեան Տեառն, էջ 60:

34 Տե՛ս անդ, Կանոն Ծննդեան Քրիստոսի երկրորդի աւուր, էջ 28:

35 Տե՛ս անդ, Կանոն աղուհացից երկրորդ կիւրակեի, էջ 143:

36 Տե՛ս անդ, 116: Այս մեծացուցէն Ապաշխարութեան օրինութեան հատուած է (ԱՁ):

37 **Եփրեմ արք. Թ-ապագեան**, Շարական Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Երեւ., 2006, էջ 157 (այսուհետ՝ Եփրեմ արք. Թ-ապագեան, Շարական):

ծացուցէն: Իսկապէս եզակի մի գործ, քանի որ ստեղծագործութեան երեք տների կապը՝ բովանդակային առումով, չափազանց կուռ է: Շարականն ամբողջութեան մէջ Քրիստոսի՝ յաղթականօրէն Երուսաղէմ մտնելու նկարագրութիւնն է[38].

Ուրախ լեր յոյժ, դուստր Սիօնի. պայծառացիր, Երուսաղէմ, զարդարեա զդրունս քո քաղաքդ Աստուծոյ:

Քանզի Քրիստոս որ էնն յաթոռ փառաց. այսօր մտանէ ի քէզ՝ նստեալ ի վերոյ յաւանակի նորոյ:

Ծերք եւ տղայք ոստովք ձիթենեաւք, միաբանութեամբ երգէին. օրհնութիւն որդւոյ Դաւթի օրհնեալ եկեալ անուամբ Տեառն[39]:

Աւետարանական յայտնի դրուագի այսքան կարճառօտ եւ միեւնոյն ժամանակ այսքան յագեցած նկարագրութիւնը մեզ յիշեցնում է Ծաղկազարդի տեսարանով մեր միջնադարեան մանրանկարները: Այդ նկարներում շեշտուած են շարականում նկարագրուած տեսարանի մէջ առաւել աչքի ընկած մանրամասները՝ քաղաքի զարդարուած դռները, Քրիստոս՝ նստած աւանակի վրայ, ժողովրդի բազմութիւնը եւ ձիթենու ոստերը: Սոյնը լաւագոյնս արտայայտուած է օրինակ Հաղպատի Աւետարանի նոյն թեման պատկերող մանրանկարում (Մաշտոցի անւ. Մատենադարան, ձեռ. թիւ 6288)[40]:

Այս շարականի առաջին տան մէջ քաղաքն անձնաւորուած է եւ հանդիսանում է Քրիստոսի գալստեան ուրախութեան կրողը: Հեղինակը դիմում է Երուսաղէմին, որպէսզի քաղաքը պայծառանայ ու զարդարի իր դռները:

Ծննդեան ութերորդ օրուայ կանոնի մեծացուցէն[41] Քրիստոսի Ծննդեան եւ փրկչական առաքելութեան տարփողումն է, իսկ Յարութեան ԱՁ *«Մեծացուցանեմք զքեզ»*[42] սկսուածքով շարականն իր ոճով եւ շօշափած խնդիրներով դիւցազներգութիւն է յիշեցնում, որի գլխաւոր հերոսը մահը ոտնակոխ անող, խաչը բարձրացնող, ապա յարութիւն առնող ու Հօր փառքով երկինք համբարձուող Քրիստոսն է:

Քրիստոսին է նուիրուած նաեւ Համօրէն ննջեցելոց կանոնի *«Բազմերամբ վեհագունիցն»*[43] սկսուածքով մեծացուցէն:

Բացառութիւններ

«Զքեզ երեւեալ դուռն» սկսուածքով շարականի երեք տներն էլ ունեն տարբեր հասցէատերեր: Առաջին տունը ձոնուած է Աստուածամօրը, երկրորդն ուղղուած է Մովսէս մարգարէի ժամանակ մորենու միջից մարդկային ցեղի կուսութեան նոր խորհուրդը յայտնողին, այսինքն՝ Սուրբ Երրորդութեանը՝ Աստծուն: Երրորդ տունը *«ի Հօրէ անժամանակապէս եւ ի մօրէ անթարգմանաբար»* ծնուած Որդու մասին է[44]:

Տարբեր հասցէատէրեր ունի նաեւ Աստուածածնի ծննդեան կանոնի ողորմեան, որը նոյնպէս իբրեւ մեծացուցէ բերուած է «Զայնքաղ շարականի» 46-48 էջերի մեծացուցէների

38 Այս երեւոյթը եւս առանձնայատուկ է, քանի որ նկարագրել օրուայ խորհուրդը բնորոշ է առաւելաբար օրհնութիւն շարականներին:

39 «Շարական», էջ 231:

40 Տե՛ս "The Armenian miniatures of the 13th and 14th centuries", նկար 13:

41 Տե՛ս անդ, էջ 52-53:

42 Տե՛ս «Շարական», էջ 56:

43 Տե՛ս անդ, էջ 684-685:

44 Հմմտ. «Շարական», Մեծացուցեք Յարութեան Տեառն, էջ 56-57:

ցանկում: Այս շարականի առաջին տունը նուիրուած է Հայր Աստծուն՝ մարդկային բնութեանը ողորմելու եւ Սուրբ Կոյսին՝ Միածին Որդու ծնողին իբրեւ պարգեւ տալու համար: Երկրորդ տունը նուիրուած է Որդուն: Այստեղ Աստուածածնի ծնունդը մեկնաբանում է գեղեցիկ հնարանքով՝ Քրիստոս Կոյս Մարիամին օրէնքի ամպից ցօղում է մեզ վրայ, իսկ Ինքն էլ ծնում է նրանից: Վերջին տունը՝ Սուրբ Երրորդութեան երրորդ անձին՝ Սուրբ Հոգուն է նուիրուած: Այստեղ եւս հիմնական թեման Տիրուհու ծնունդն է, սակայն շեշտադրուած է դրանում Սուրբ Հոգու ունեցած դերակատարութիւնը[45]:

Պենտեկոստէի կանոնի մեծացուցէն եւս բացառութիւն է, քանի որ այն ամբողջութեամբ նուիրուած է Սուրբ Հոգուն: Չափազանց պարզունակ յօրինուածքով այս շարականի առաջին տունը հրաւիրում է ժողովրդին՝ ցնծալու Սուրբ Հոգու գալստեան համար, իսկ երկրորդ եւ երրորդ տները նկարագրում են, թէ ինչպէս են համապատասխանաբար՝ առաքեալներն ու արարածները ցնծում Սուրբ Հոգու գալստեան համար եւ փառաբանում Նրան:

Հայր Աստծու փառաբանութեանն է նուիրուած հետեւեալ շարականը.

Զքեզ, Հայր, յառաջ քան զյաւիտեանս բարեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց. ձայնիւ երգով գոչեն եւ աղաղակեն. Աստուած Աստուծոց եւ Տէր Տերանց փրկիչ գոլով:

Առաքեցեր զքո Միածինդ մարմնանալ ի Սուրբ Կուսէն, եւ անարատ ծնանիլ յորովայնէ անապական. բառնալով զմեր նեղութիւնս. Աստուած Աստուծոց եւ Տէր Տերանց փրկիչ գոլով:

Շանորհք բարի յԵրուսաղէմ երեւեցար հեթանոսաց. զի Արարիչն յաւիտենից պղայ եղեալ՝ յորդեգրութիւն կենաց կոչէ. Աստուած Աստուծոց եւ Տէր Տերանց փրկիչ գոլով[46]:

Թէեւ այս շարականի երկրորդ տան ենթատէքստը եւս Հայր Աստծուն է ուղղուած է, բայց այն ամբողջությամբ Միածնի աշխարհ գալու մասին է: Այս հատուածում նկարագրուած է Սուրբ Կոյսից Քրիստոսի ծննդեան կերպը *(անարատ ծնանիլ յորովայնէ անապական):*

Պէտք է խոստովանել նաեւ, որ տարբերակման եզրերը երբեմն խիստ անորոշ են: Ցաճախ խրթին ոճի կամ կարճառօտութեան պատճառով հնարաւոր չի լինում որոշել, թէ այս կամ այն շարականական հատուածն ում է ուղղուած:

Գեղարուեստական արժէքը

Դժուար է խօսել այս երկերի գեղարուեստական արժէքի մասին: Ընդհանրութեան մէջ վերցրած մեծացուցէներն առանձնապէս աչքի չեն ընկնում բարձր գեղարուեստականութեամբ, քանի որ այս բանաստեղծութիւնները նախ եւ առաջ ստեղծուել են հաւատացեալներին կրօնական զգացմունքներ հաղորդելու համար, եւ բնականաբար ամբողջութեան մէջ իրենցից ներկայացնում են աստուածաբանական տէքստեր, որոնց մէջ առաջնայինը ոչ թէ գեղագիտական նպատակների ծառայելն է, այլ՝ կրօնական: Տեղին է մէջբերել Կոմիտաս վարդապետի՝ շարականների մասին հետեւեալ դիպուկ դիտարկումը, թէ «Բանաստեղծութեամբ մշակուած է աւելի միտքը, քան պատկերաւորութիւնը»[47]:

45 Հմմտ. անդ, Կանոն Հրաշափառ Ծննդեան Տիրուհոյ Կուսին Մարիամու ի Յովակիմայ եւ յԱննայէ, էջ 4-5:

46 «Շարական», Կանոն Ծննդեան Քրիստոսի վեցերորդի առաջ, էջ 45-46:

47 **Կոմիտաս**, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Եր., 1941, էջ 109:

Չնայեած այս հանգամանքին եւ տեսակի թելադրած արտաքին ձեւի կաղապարին, այնուամենայնիւ որոշ մեծացուցէներ ստեղծուած են բաւական յաջող գեղարուեստակա- նութեամբ: Շարականագրին ոչ բոլոր դէպքերում է յաջողուել շրջանցել կամ յաղթահարել այդ կաղապարը: Այս առումով բացառիկ է *«Ով գերահրաշ ծաղիկ»* սկսուածքով մեծա- ցուցէն.

Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ յեղեմայ. հոտ անմահութեան ծնեղոցս Եւայի, յորմէ ափռեցաւ մահ ընդ տիեզերս. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Դու՝ լուծիչ երկանց, բարձող անիծից. ծագումն արեւու լուսոյն ճշմարտի, որով հերքեցաւ խաւարն առաջին. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Զքեզ ունիմք բարեխօս, Կոյս անհարսնացեալ. մայր անարատ Էմմանուէլի, տաճար բանին Հօրն երկնաւորի. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք[48]*:*

Այստեղ բացի աւանդական սուրբգրային ու դաւանաբանական պատկերաւորման մի- ջոցներից, օգտագործուած են նաեւ աշխարհիկ պատկերաւորման միջոցներ. *«գերահրաշ ծաղիկ»*, *«հոտ անմահութեան»*, *«ծագումն արեւու»* եւ այլն: Բացի այդ, ի տարբերութիւն շարականների մեծամասնութեան, այս բանաստեղծութեան մէջ գերակշռում են զգացմուն- քայնութիւնն ու դրամատիզմը. վերջինս յատկապէս երեւան է գալիս առաջին եւ երկրորդ տներում, որոնցում նկարագրւում է նախ՝ ինչպէս մահը սփռուեց տիեզերքում եւ ապա՝ արեւի լոյսի յաղթանակն այդ խաւարի (մահուան) դէմ: Օգտագործուած են չափազանց հարուստ սիմվոլիկ միջոցներ, որոնց հնարամիտ եւ յաջորդական կիրարկումը շարժման տպաւորու- թիւն են ստեղծում: Այնքան ակնառու է այս եւ միւս մեծացուցէների միջեւ եղած տարբերու- թիւնը, որ Հ. Գաբրիէլ Աւետիքեանը կասկած է յայտնում այս շարականի՝ նախապէս իբրեւ մեծացուցէ յօրինուած լինելու վերաբերեալ. «Ի ձեռագիր օրինակս ինչ ոչ գոյ բնաւ. իսկ այլ ձեռագիր դնի յաւարտ շարակնոցին ընդ այլ շարականս, որոց յօրինուած յետոյ է ժամանա- կաւ. ցուցեալ այսու՝ թէ այն մեծացուցէ ո՛չ է արարեալ ի հնագունից վարդապետաց, թէպէտ եւ կազմութիւն նորա ունի զիր վայելչութիւնս, առանց մթութեան իմաստից»[49]:

Բանաստեղծական թռիչքի տեսակէտից նախորդին չի զիջում «Համօրէն ննջեցելոց ի Քրիստոս» կանոնի մեծացուցէներից հետեւեալը.

Լեառն վիմածին, աղբիւր յորդառատ. բարունակ ծաղկեալ, այգի վայելուչ սրովբէ հողեղէն. քաքունայ բանին տուն տնօրէնութեան, պաղատաք հոգւոյն. առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոց:

Փափկութեան դրախտին բացող բանալի. Քրիստոսի բարձող, նմանող երկ- նից. սափոր ոսկեղէն լի մանանայիւ. զաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ, տաճար լուսոյ մայր. առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոց:

Յօդ քաղցրաձայնայ՝ ցանկալի զուարթնոց. նիւթեղէն սրովբէ, զեղ մարգարտա- փայլ, հիմն եկեղեցւոյ. մաքուր աղաւնի, անմպ հովանաւոր, սուրբ կոյս Մարիամ.

48 «Շարական», Մեծացուցէք Յարութեան Տեառն, էջ 58-59:

49 «Բացատրութիւն շարականաց», էջ 100:

առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ևնչեցելոց[50]*:*

Ամբողջ բանաստեղծութիւնը կազմուած է Տիրամօրը գովերգող գեղեցիկ մակդիրաւոր արտայայտութիւնների ու շրջասութիւնների շղթայից. միայն առաջին տան մէջ այդպիսի արտայայտութիւնների թիւը հասնում է եօթի. *«լեառն վիմածին», «աղբիւր յորդառատ», «արովքէ հողեղեն»* եւ այլն: Աստուածամայրն այստեղ համեմատւում է թէ՛ բնութեան սքանչելիքների եւ թէ՛ սուրբգրական խորհրդապաշտական իրողութիւնների հետ: Համեմատութիւնները մի քիչ պաթետիկ ու վերամբարձ բնոյթի են, մի բան, որ բնորոշ էր շարականների ստեղծման ժամանակի ոգուն, սակայն միեւնոյն ժամանակ Աստուածամօրը գովերգելու տեսակէտից՝ անկրկնելի եւ չափազանց նպատակասլաց *(«սափոր ոսկեղէն լի մանանայիւ»):* Նախորդ շարականի նման այստեղ եւս իշխում է աշխարհիկ պատկերաւորման կերպը: Ի դէպ, Աստուածամօրը «Սափոր ոսկի» է կոչում նաեւ Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսը[51]:

Տեառնընդառաջի կանոնի մեծացուցէն յօրինուած է Ղուկասի Աւետարանի Բ:25-35-ի հենքի վրայ:

Աթոռ քրովբէական երեւեալ այսօր Սիմէօն, զԱստուածորդին ի գիրկս իւր բարձեալ մարմնով. զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն:

Հոգւովն գոչէր, ցնծայր ալեօքն ծերունին ասելով՝ սա է թագաւորն անմահ. զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն:

Արդարասուելով աղերսէր. արձակեա զիս ի խաղաղութիւն անարատ ծնողի քո բարեխոսութեամբ. զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն[52]*:*

Երկրորդ տան մէջ շարականագիրը Սիմէոն ծերունու կերպարն օժտել է պրկուած զգացմունքայնութեամբ *(«Հոգւովն գոչէր, ցնծայր ալեօքն ծերունին»),* իսկ վերջին տան մէջ, չափազանցութեան հնարանքին դիմելով, իր ստեղծագործութեանը հաղորդել է առաւելագոյն քնարական տրամադրութիւն (Աւետարանում ծերունու արտասուելու մասին ոչինչ չի ասւում, իսկ շարականագիրը գրում է. *«Արդարասուելով աղերսէր»*):

Անշուշտ հնարաւոր է մեծացուցէ շարականների մէջ գտնել այնպիսիները, որոնք մէջբերուած վերջին երեք շարականների նման ստեղծուած են հեղինակային անկաշկանդ մօտեցմամբ, եւ որոնց համար առաջնային նպատակ է եղել հոգեւոր նիւթը գեղագիտական արժէքներին ծառայեցնելը, սակայն չպէտք է մոռանալ, որ այնուամենայնիւ միջնադարեան հեղինակի համար գերխնդիրը մնում էր մէկը. ամեն ինչից առաջ մատուցել կրօնական-դաւանաբանական նիւթը, իսկ գեղարուեստականութիւնը պարզապէս միջոց էր այդ նպատակին հասնելու համար:

Այնուհանդերձ անհրաժեշտ է նկատել, որ մեծացուցէները հայ միջնադարեան երգարուեստի յաջող դրսեւորումներից են՝ աստուածաշնչական նիւթի բանաստեղծական մշակման թէ՛ հոգեւոր - գաղափարական եւ թէ՛ գեղարուեստական - գեղագիտական տեսանկիւններից:

---

50 «Շարական», էջ 675:

51 Տե՛ս «Հայագիտական ուսումնասիրություններ», էջ 177:

52 «Շարական», էջ 69: